բարձին զաւելորդ կանթեղս և զաչտանակս Ցունաց, եւ արգելին պատարագելոյ նոցա 'ի Գերեզմանն, և կացուցին անդ զԼուսարարն իւրեանց։ Ստիպեցին զՀայս կախել ըղպատկերն իւրեանց 'ի վերայ դրան Գերեզմանին. բայց Հայք ոչ առին յանձն, զի մի տացեն տեղի կռուոյ, այլ սպասէին դալստեան հրովարտակին։ Բարձին նաեւ Լատինք զաչտանակս և զկանթեղս և զխաչքարն զորս եղեալ էին Ցոյնք 'ի Խաչ Գիւտն, և եդին զիւրեանցն. զկնի այսր կամեցան եղծանել զդիրս և զպատկերս զոր դրոշմեալ էին Ցոյնք 'ի վերայ քարանց Գերեզմանին Քրիստոսի. առնուլ զգերեզմանն Ս. Աստուածածնի, և զեկեղեցին Բեթղեհէմի, այլ արգել զնոսա Կուսակալն Դամասկոսի։ Եւ յետ այնորիկ առին Իլամ 'ի Դատաւորէն և հանրագիր յայլազգեաց ծախեալ ընդ այն 150 քսակս դրամոց, տակս փոխելոյ Ցունաց զառաջին ձեւս տաճարին Ս. Յարութեան։ Առեալ զայսոսիկ դրեանս Ֆրա Մանուէլ վերատին մեկնեցաւ յԱքքէ և անտի 'ի Կոստանդինուպոլիս. գնացին նա և 'ի կողմանէ Ցունաց դատիլ անդ, զի Լատինք պնդէին քակել զաւելորդ չինուածս տաճարին, Ցոյնք ասէին թէ ոչ է գրեալ 'ի հրովարտակին, այլ միայն յանձնել զտեղիս նոցա, որ և կատարեցաւ. քանզի Լատինք ընդ հրովարտակին իւրեանց ոչ էին բերեալ ոստիկան 'ի Դրանէ եւ յուսադրէին զՀայս, որ յայնժամ սիրով վարէին ընդ նոսա, մինիլ երկայնամիտ, զի վախճանն բարի լինի ասէին։

Ցոյնք կարի իմն զայրացան 'ի վերայ այսր գործոյ և հանին աղմուկ. երթամք ասէին 'ի քաղաքէ աստի, բայց այլազգիք ոխացեալ ընդ նոսա յաւուրց անտի չինութեան, ունչս առնէին բանից նոցա, ապա գրեցին գիր բողքոյ և առաքեցին պատգամաւորս առ Կուսակալն, և տեսեալ թէ արհամարհեցան յաչս այլազգեաց, սկսան նախատել զմիմեանս, զի յանիրաւի և ինքնահաւան կամօք յափըշտակեալ էին զիրաւունս այլոց, որոյ վասն գտին ըստ արժանւոյն զպատուհաս իւրեանց։

Մկրտիչ վարդապետ Մեղրիկ կոչեցեալ՝ թողեալ ըզգործ ժողովելոյ զնպաստ, նստէր յԷջմիածին՝ ակն ունելով առնուլ վկայական յերուսաղէմէ և ձեռնադրիլ Եպիսկոպոս. և եղեւ 'ի ծանուցանելն զայս Պօղոս վարդապետի